

## ՎԵՐՄ

### „ՄԷԿԸ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ“

Մ ի աղջկայ օրատետրից 1)

Նոյեմբերի 25-ին:

Այսօր ես փորձում էի իմ պսակադրութեան զգեստը: Դա իրականութեան մի մասն էր, որ ներս խուժեց իմ ցնորքանքման կեանքի մէջ:

Երեք շաբաթից յետոյ իմ հարսանիքն է:

Իմ մտքերը յառառութեամբ սահում են այդ երեակայութեան մօտով, նա յանկարծակի անհետացաւ իմ գիտակցութեան մէջ:

Իսկ առաջ նա իմ միայնակ ժամերի ամենաքաղցր երազըն էր:

Այժմ ես փախչում եմ այդ երազից: Այն ամենը, որ առաջ ինձ ամենավեհ երջանկութիւն էր թւում, հետզհետէ չորանում է իմ վշտի ազդեցութեան տակ:

Իմ հոգու սպասած հրաշագեղ երջանկութիւնն այժմ մեռնում է տանջող ցնցումներէ մէջ:

Այժմ կեանքի ամեն մի շարժման մէջ ես զգուանք ու դատարկութիւն եմ տեսնում:

Ինձ շատ անգամ թւում է, որ ես էլ եմ ցեխոտուած... այս կեղծիքների հեղեղի մէջ...

Գէորգը զգում է, որ ես դուրս եմ պրծնում նրա ձեռքից: Նա աշխատում է ինձ մեխել իրան: Նա վշտալից կարօտով որսում է իմ ամեն մի հայեացքը, սրտիս ջերմութեան ամեն մի սուսափիւնը:

Նա փափագում է իմ նախկին փաղաքանքներին. բայց

1) Տես «Մուրճ» № 3

չի համարձակուում ինձ մօտենալ: Նա միայն աչքերով է ինձ գրկում... աչքերով և խօսքերով...

Ես յուսահատութեամբ փորձեր եմ անում բանականութեան ապացոյցներով խնդրելու իմ զգուանքս... և ինքս ինձ մեղադրում եմ:

Շատ անգամ ինձ յաջողուում է մեղմ և զիջող լինել. և ես կամենում եմ անալոյման և յաւիտեան հաւատալ...

Եւ յաճախ զարթնում է իմ քնած սիրոյ զգացմունքը և ես կաթողին տարածում եմ բազուկներս...

Բայց իմ սիրոյ հտուից չար աչքերով հետևում է իմ այն սոսկալի յիշողութիւնը... և նորից ինձ դարձնում է անզութ ու սառն:

Եւ այդ ժամանակ ինձ թւում է, թէ ես Գէորգի կինը չեմ կարող լինել...

Այնպէս պատահողութեամբ է իմ հոգին: Ահա այսպէս անօգնական և դժբախտ եմ ես...

Իմ խեղճ ծնողները ոչ մի բան չեն կասկածում: Նրանց ներկայութեամբ ես դիմակաւորում եմ...

Նոյեմբերի 29-ին:

Այսօր արուարձանում անմիտ կերպով թափառելիս, պատահեցի մի աղքատ և սապատաւոր աղջկայ: Նա ողորմութիւն չիմնդրեց, բայց այնպիսի անյոյս աղերսանքով և վշտով բարձրացրեց իր հայեացքն դէպի ինձ, որ ինձ թուաց, թէ նա օգնութեան է կանչում... օգնութիւն իր տառապանքին...:

Ես նրան տուի մօտիս եղած բոլոր փողերը:

—Աստուած ձեզ վարձատրէ.—ասաց նա իր մեղմ և տրտուր մանկական ձայնով...

Եւ այդ ժամանակ իմ մէջ զարթնեց խորը և մաքուր կարեկցութիւն և քնքրութեան նման մի բան դէպի այդ թշուառ և հաշմանդամ էակը:

Ես կուացայ դէպի նա և փաղաքշանքով սկսեցի շոյել նրա մազերը:

Սապատաւոր աղջիկը սկսեց դառնազին լաց լինել և համբուրել իմ ձեռքերը այնպէս կաթողին, այնպիսի ջերմ գոհունակութեամբ...

Դա նրա թշուառ կեանքի մէջ երջանկութեան մի ճառագայթ էր. այն կեանքի, որին անձանօթ էր կարեկցութիւնը...

Ես էլ կը կամենայի կանգնել փողոցի անկիւնում և ողորմութիւն խնդրել... աղերսալից հայեացքով և տարածած բազուկներով... Ես կը խնդրէի մաքրութիւն, ողջախոհութիւն և

ոյժ... ես անխօս կը խնդրէի, սապատաւոր աղջկայ նման... իմ հաշմանդամ կեանքի համար...

Բայց այդ ողորմելի և թերակազմ մարդիկ անցնում են իմ մօտից ժպտող աչքերով և անգուլթ սրտով:

Եւ ոչ ոք ինձ ողորմութիւն չի տալիս... Ոչ ոք...

Դեկտեմբերի 1-ին.

Այսօր ես հրաժեշտի նամակ էի գրում Գէորգին: Մի այնպիսի նամակ, որի գրելու ժամանակ դառնագին լաց են լինում և արբենում սեփական վշտով, առանց հասնելու նրա իսկական լրջութեանը: Այնտեղ կային շատ գեղեցիկ և հնչիւն խօսքեր անտեղի տանջանքների, կորստաբեր մոլորութիւնների և խորտակուած երջանկութեան մասին: Դա մի սովորական նամակ էր սրտաշարժ հրաժեշտով և կեղծ ինքնամեղադրանքով... Ես ամաչեցի ինքս ինձանից, երբ կարդացի գրածս... Ես պատռեցի այդ նամակը:

Յետոյ իմ զգացմունքները օրհասական ոյժով ուրիշ ուղութիւն ստացան: Ես կամենում իմ սթափուել իմ կամքի ու ժասպառ արբենալուց: Ես կամենում եմ ամբանալ և յաղթել... Ես կամենում եմ ինձ վատնել սիրոյ մէջ և փոխարէնը ոչինչ չստանալ. ինչպէս որ արևը վատնում է իր լոյսն ու ջերմութիւնը անձնազոհ առատութեամբ... Ես կամենում եմ անսահման պարգևել... Ո՛հ, որքան չնչին, թոյլ ու խղճալի է եղել իմ սէրը մինչև այժմ: Շատ կարելի է, որ իսկական քաջութիւնն այն է, որ քայլում է դիակներին վրայով:

Դեկտեմբերի 2-ին:

Ես ուրախ եմ իմ որոշումից: Նա իմ սիրոյ փորձաքարն է կազմում: Մանր և ստոր զգացմունքներս անհետանում են իմ միջից: Կի՛նն իր գիտակցութեան մէջ միայն այն ժամանակ է բարձրանում, երբ տանջւում է: Դրա համար էլ նրան այնքան ստիպում են տանջուել:

Դեկտեմբերի 5-ին:

Տղամարդիկ զուրկ են համբերութիւնից, ինչպէս և զուրկ են նաև պասսիւ դիմադրութիւնից:

Մի յիմար և դատարկազուլիս երիտասարդ—այլանդակ կեանքի մի իսկական տիպար—ասաց ինձ մի անգամ.

—Մենք, տղամարդիկս, չենք կարող հաւատարիմ լինել, որովհետև հաւատարմութիւնն իր մէջ չունի գործունեայ ոյժեր: Տղամարդիկ պէտք է ձգտեն, յաղթեն և հրաապուրեն... Հէնց դրա մէջ է ոյժը:

Այսպիսի հայեացքները շատ յարմար քող են անառակութեան համար: Նրանք մի տեսակ անցաթուղթ են զանազան մոլութիւնների համար. անցաթուղթ՝ ժամանակակից պատահիւնների ձեռքում, որոնք ստույգ են, «հարկաւոր է կեանքից օգտուել»:

Եւ որտեղ կառավարութիւնն իր «փրկարար» հիմնարկութիւններով չի հարթում ճանապարհը, այնտեղ կըսկսեն այն ցածրիկ ցանկապատների վրայից թռչել, որ կոչոււմ է ամուսնութիւն, սէր... հաւատարմութիւն...

Սեռական անառակութեան սոսկալի չարիքը հետեանք է մեր այլանդակ դաստիարակութեան: Անարդար, երկակի բարոյագիտութիւնը հետեանք է՝ սխալ, ի չարը գործ դրուող ոյժերի:

Պատանիներն, իրանց ծնողների, դաստիարակների, հասարակութեան բարոյագիտական հայեացքներից քաջալերուած, իրաւունք ունեն խրուել ամենակեղտոտ վայելքների մէջ. և նրանք չեն կորցնում իրանց յարգը ուրիշների աչքում: Կարծես, նրանք ոչընչով չեն խախտում բարոյագիտութեան պահանջը, այս բոլոր ցոփութիւններից յետոյ նրանք ամուսնանում են և դժբախտացնում անմեղ ու ջահէլ էակներին—օրիորդներին և կամ, որ հազարապատիկ վատթար է; նրանց մղում են դէպի դաւաճանութիւն և գարշանք:

Մեր ունևոր դասակարգի օրիորդները դաստիարակոււմ են տաք մթնոլորտում, հոգատարութեամբ պահպանուած ու պատրաստարուած: Նրանք կոյր և անուս են ստնում կեանքի ասպարէզը:

Մինչև հիմա էլ հասարակութեան լայն շրջաններում այն սխալ կարծիքն է տիրում, թէ կեանքի բնական երևոյթները չհասկանալն ու մարմնական կուսութիւնը իրար հետ ձեռք ձեռքի տուած պէտք է ընթանան: Սրա վերաբերեալ ամեն մի անփութութիւն յանցանք է համարոււմ: Եւ ահա կեանքի համար բոլորովին անպատրաստ օրիորդները յանկարծ ընկնում են պարտականութիւնների և պատասխանատուութիւնների շրջանը... և նրանցից շատ-շատերը մի գեղեցիկ օր իրանց խաբուած են տեսնում...

Եւ այսպիսի ճանապարհներով սպանում են կնոջ ամենագեղեցիկ, ամենամաքուր և ամենավսեմ զգացմունքները:

Տղամարդիկ զրկել են կանանց այն անխախտութիւնից, որ ատատօրէն վայելում են իրանք: Եթէ կինը ազնիւ է, բարի է. նա իր ամբողջ կեանքում պէտք է տանջուի իր առաջին հիա-

սթափուլթիւնից: Իսկ եթէ նա իր մէջ չարութեան սերմեր է կրում, շուտով կընկնի դատարկութեան անդունդը:

Եւ ահա այսպիսով կէնը իր որդիներին դաստիարակում է ճանիճի համար, իսկ իր աղջիկներին պահում է անմեղութեան նեղ պատերի մէջ—ոչ թէ բարոյականութեան դրդամար—  
—օ՛, ո՛չ, այլ այն պատճարով, որ այդ ողջախոնութիւնը շատ գնողներ կը գրաւէ և ապրանքի արժէքը կը բարձրացնէ...

Սա մի ճանապարհ է, որ թէև դանդաղ, բայց հաստատուն կերպով տանում է դէպի սոսկալի անկում:

Սա չափազանցութիւն չէ, իրականութիւնն ինքը ցոյց է տալիս այս ամեն օր և ամեն ժամ:

Ամենալաւ պատկերները միշտ ծաղրանկարներ են թւում մեզ:

Գեղեմեքերի 4-ին:

Երբ այսօր մթնշողին Գէորգը մտաւ իմ սենեակը, ես նստած էի լուսամուտի մօտ և լաց էի լինում:

Մի ինչ որ ուրախալի և սիտփիչ բան կար արտասունքներին մէջ: Նրանք տանջող ոչինչ չունէին իրանց մէջ: Գէորգը երևի ընազգամբ զգաց այդ, որովհետև առանց մի խօսք ասելու քաշեց ինձ իր մօտ և համբուրեց: Նրա համբոյրներն այրեցին երեսս:

Իմ ուժասպառ զգացմունքները համբ մնացին նրա անսպասելի բռնկումին, բայց ես չէի ընդգիմանում նրան: Նա քնքրութեան անմիտ խօսքեր էր մըմնջում: Իսկ յետոյ ընկաւ ծնկաչոք իմ առաջ և աղերսում էր՝ սէր և լիովին ու կատարեալ ներումն:

—Վերա, հառաչում էր նա.—մի՛ ստիպիր ինձ քաւել ընդհանուրի մեծ մեղքը: Մի՛ թողնիր ինձ կորչելու: Խլի՛ր քո յիշողութիւնից այդ անցեալը... Ես սլանում եմ դէպի բեզ, Վերա... Լսում ես դու...

Նա գրկել էր իմ ծնկները: Նրա ամբողջ մարմինը դողում էր: Նրա մէջ ամեն բան տենդային լարուած դրութեան մէջ էր...

Ես զգում էի, թէ ինչպէս իմ մտքերը ցրւում էին զանազան ուղղութեամբ և զանազան կողմեր: Մնացել էր միայն զղացմունքների մի քօս: Ամենակարող կամքը կը կարողանար նրանից մի օշխարհ ստեղծել:

Բայց ես թոյլ էի...

Կամաց, շատ կամաց տարայ ձեռքս Գէորգի ճակատի վրայով... և շոյեցի նրա մազերը...

—Ես կ'աշխատիմ.—ըընջացի ես:

Գէորգը պահեց իր գլուխը ծնկներին մէջ և արտասուեց...

Գեղեմեթբերի 5-ին:

Մենք մի չքնադ, փոքրիկ բնակարան վարձեցինք խաղաղ փողոցի վրայ, չորրորդ յարկում:

Մեր բնակարանի արդ ու զարդի մէջ Գէորգը մտցրեց իր գեղարուեստական ճաշակի ամբողջ նրբութիւնը: Ամեն բան փայլում է պարզութեամբ: Քնքոյշ գոյներ, հանդարտ, որոշ գծեր: Այդտեղ չկան ոչ աչք ծակող Barock կամ Rokoko... բոլորը հասարակ անգլիական ձևեր են: Պատերի վրայ կախուած են շատ գեղեցիկ պատկերներ, նշանաւոր հին Գէորգի սիրած արուեստագէտների՝ Լէօնարդօի, Բելլինիի, Բոտիչելլիի... նկարների ընդօրինակութիւնները... Նոյնպէս Բեօկլինի «Մեռեալների կղզու» ընդօրինակութիւնը:

Շատ անգամ բոլորովին անտարբեր եմ դառնում գէսլի գեղարուեստը, որ այնքան սիրում եմ... Նա մի համեղ պատառ է նրաբաճաշակ մարդկանց համար: Եւ դրանք այն մարդիկն են, որոնք իրանց երջանիկ են զգում...

Դեռ ևս մեր բնակարանի վրայով սաւառնում է հին, նեխուած և մեռած օդի շունչը: Այդ շունչը վհատեցնում է մարդկային հոգին: Նրա մէջ մի սոսկալի և անսովոր բան կայ. բայց դրա հետ միասին կայ նաև մի ինչ որ գեղեցիկութիւն:

Շատ անգամ ես աննկատելի կերպով բարձրանում եմ վերև. բոլորովին մենակ... և լարուած զգացմունքներով աշխատում եմ քօղի յետևից տեսնել իմ ապագայ օրերը:

Ես չեմ համարձակուում մտածել, որ տասն օր էլ... տասն օր էլ... և այն ժամանակ...

Մի սենեակը դեռ բոլորովին դատարկ է...

Գեղեմեթբերի 7-ին:

Օրերն անցնում են իմ մօտով, որպէս վիթխարի հարցաւկան նշաններ: Ամեն մի օրը սպասում է մի բանի—մի որևէ անակնկալ, ազդու... անսանձ... բանի... մեքենայաբար կատարում եմ ես իմ սովորեալ գործը: Մեքենայաբար մտածում եմ իմ սովորական մտածմունքները:

Շատ անգամ ինձ թւում է, թէ իմ գիտակցութիւնը երկու մասի է բաժանուել՝ դիտող և ազրող մասերի: Առաջինը քննադատում է երկրորդին անաչառ հանգստութեամբ... Իսկ միւսը հառաչում է յուսահատութեամբ լցուած:

Առաջինը իսկական է և կեղծ՝ իր միջնորդութեան մէջ... միւսը ճշմարիտ է և բարի:

Եւ զիտակցութեան այդ երկու մասերը վիճում են և կուռւմ իրար դէմ:

Դիտող մասը ասում է ինձ. «յաղթիր քեզ, որովհետև դու սիրում ես»: Եւ ապրող մասն ասում է. «հրաժարուիր, որովհետև դու սիրում ես»:

Սա իմ զգացմունքների հոսանքն է, որ մերթ բարձրանում է, մերթ ցածրանում է...

Իսկ Դէորզը ման է գալիս երանելի անուրջների յուզմունքներով բռնուած և երազում է մանկական ցնորքներով հրջանկութեան ու սիրոյ մասին...

Այս զարմանալի հաւատը— մարդկային կեանքի հիմքն է կազմում...

Դեկտեմբերի 10-ին:

Ես հանգստութիւն չեմ գտնում: Ես մէկ գործից դէպի միւսն եմ անցնում: Ոչ մի բան ինձ չի գրաւում: Ոչ մի բան ինձ ուրախութիւն չի պատճառում: Ես կորցրել եմ կեանքիս նպատակը:

Իմ հոգու մէջ, կարծես, օտար, կոշտ, ցաւ պատճառող մի մարմին կայ:

Ես չեմ կարողանում տանը նստել, թափառում եմ փողոցներով:

Աննպատակ անցնում եմ ամբոխի միջով: Մերենայաբար կանգնում եմ խանութների առաջ: Մերենայաբար հայեացքս ընկնում է շտապող մարդկանց դէմքերին...

Երբեմն իմ հոգու մէջ սողում է մի անհանգիստ միտք, որ աւելի գրգռում է նրա խոր ու ցնցող վէրքը:

Իմ շուրջը կուռւմ է կեանքը: Կառքերը որոտում են, Բարձրաձայն կանչում են վաճառանոցի կանայք: Մարդիկ խորասուզուած են իրանց մտքերի մէջ:

Կանայք անցնում են իմ մօտով ահագին գլխարկներով և գրգռիչ ժպիտներով:

Եւ ատելութեան զգացմունքը բարձրանում է իմ հոգու խորքից:

Նրանք էլ երևի սրանց նման են հղել... սրանց նման...

Տղամարդիկ նայում են ինձ անպատկառ և լիբը հայեացքով:

Ես այդ զգում եմ, որպէս Ֆիզիկական մի ցաւ:

Առաջ ես ման էի գալիս, կարծես, ամպով պատած և կոյր էի դէպի ամենօրեայ վարշանքները... Իսկ այժմ...

Ամեն բան ինձ համար անհատական նշանակութիւն է:

ստանում. ամեն բան ինձ համար խիստ է երևում: Եւ ես մե-  
նամկ եմ... բոլորովին մենամկ...

Գեղտեմբերի 11-ին

Այսօր ես յետ հրեցի Գէորգին, երբ նա ուզում էր ինձ  
զգուել:

Ինձ թուաց, թէ ես յանկարծ տեսայ նրա հոգու ջրանցքը,  
որտեղ հաւաքուած է նրա անցեալ տարիների ամբողջ կեղտը:

Ապշեցուցիչ պարզութեամբ ես երևակայեցի այն գը-  
գուանքները, որ նա գնում էր փողով:

Համարեա շօշափելի ձևով ներկայացաւ նա իմ առաջ...  
միկնոյն կրակոտ հայեացքով... միկնոյն զգայուն շրթունքնե-  
րով... միկնոյն ցանկութիւններով... ուրիշի զրկում:

Այդ երևակայութիւնն այրում էր իմ ուղեղը:

Ինձ բաւականութիւն էր պատճառում նրան կեղտոտել  
դրանով, ստորացնել... իմ սեփական զգացմունքի առաջ... Վայր  
զցել նրան այն պատուանդանից, որ կառուցել էր իմ սէրը նրա  
համար:

Ինձ թւում էր, թէ նա պղծեց ինձ այն միկնոյն անմա-  
քուր համըրոյով, որի հետ միասին նա վատնել է իր երիտա-  
սարգութիւնը:

Ես ինձ արատաւորուած էի համարում նրա մտքերից...  
այդ շատ անգամ կրկնուած սիրոյ խոստովանութիւնից, որ նա  
շնչում էր... և լաւ ուսումնասիրած գրկախառնութիւններից:

Նրա զգայնութիւնը զգուելի էր ինձ համար: Նա ինձ թւում  
էր կոպիտ, անասնական և դատարկ...

Նա հեռացաւ ինձանից վիրաւորուած մինչև հոգու խոր-  
քը: Ես զգում էի, որ կտրուած էին մեր կեանքերը կապող բո-  
լոր թելերը... որ անհետացած է մեր ընդհանուր ապագայի  
հնարաւորութիւնը... որ իմ հաւատը մեռած է:

Ե՛ս այլևս չեմ կարող հաւատալ նրա սիրուն, նրա հա-  
ւատարմութեանը:

Ամուսնութեամբ մաքրուել, նորոգուել՝ ցոփ երիտասար-  
դութիւնից յետոյ... դրանք միայն խօսքեր են, որոնցով տղա-  
մարդիկ խարում են իրանց... դատարկ, կեղծ խօսքեր...

Սովորութիւնները, որ արմատանում են ձեր էութեան  
մէջ, պատանեկութեան զօրեղ տպաւորութիւնները, չի կարե-  
լի ձեռքի մի հարուածով հեռացնել ձեր կեանքի հորիզոնից:

Կարելի է, գուցէ, մաքրել արտաքինը. բայց այն, ինչոր  
թափանցել է ծակոտիների մէջ, հոսում է երակներում և հա-

դորդում է հոգևոր ամբողջ կազմուածքին. նա դարձեալ առաջ կը գնայ, գտնելով ազատ հող...

Եւ կեանքի ըրպէնքերին նա նորից կը զարթնի, նորից կը կենդանանայ, դուրս կը գայ գերեզմանից, կը տարածէ դէպի ձեզ իր մագիւնները, կը կպչի ձեզ, թունաւորելով թունաւրից շնչով նոր փթթող ծաղիկները...

Այսօր առաջին անգամ, որպէս փոթորկալից ամպ, մի միտք ծագեց իմ մէջ... սոսկալի մի միտք...

Դեկտեմբերի 12-ին:

Կան մրգեր, որոնք գործ են ածոււմ միայն նեխուած դրութեան մէջ: Ես միշտ անյաղթելի զուլանք էի զգում դէպի այդ մրգերը և չէի փորձում:

Միայն մի անգամ զօրով դրի բերանս փորձելու համար... Իայց իսկոյն դէն շարտեցի...

Դեկտեմբերի 13-ին:

Ինձ տանջում է մի սոսկալի կասկած: Արդեօք, ես իմ ծնողների առաջ պարտական չեմ՝ համբերել... սպասել... տանել կեանքը, եթէ նոյն իսկ նա զուրկ է ամենալաւ ցնորքից... Արդեօք, պարտական չեմ՝ սիրով և երախտիքով նրանց նուիրել կեանքը: Միթէ սա իմ սուրբ պարտականութիւնը չէ՞ Արդեօք, ոճրագործութիւն չի լինի, եթէ ինձ խլեմ նրանցից: Արդեօք, դա չի նշանակում ի չարը գործ դնել այն բարիքը, որ նրանք ինձ տուել են: Ընդհանրապէս, կ'այ, արդեօք, սեփական ճակատագիրը կարգադրելու իրաւունք: Սա մի դատարկ խօսք է... նման միւս հազարաւոր ծանրակշիւ խօսքերին: Դատարկ խօսք, որ պատկերամարտները—ամեն տեսակ պատճառաբանութիւնների հակառակորդները—կոյր հաւատով գցել են աշխարհի մէջ:

Մենք ծանրաբեռնուած ենք շղթաներով: Ամենաչնչին արտայայտութիւնն անգամ գերում է մեզ, նա կոխում է մեր գործողութիւնները նախասահմանած ձևերի մէջ, տիրապետում է մեր կամքին և նրա արտայայտութիւններին: Մենք ինքնագործ մեքենաներ չենք, այլ կեանքի գործիքներ... տիեզերական մեքենայի անիւնները... Կպչում ենք իրար, ոչնչանում ենք, հրք անպէտք ենք դաւնում: Եւ այդպէս տարածոււմ է տանջանքը... միշտ հեռւ... միշտ հեռւ...

Ես հալ ու մաշ եմ լինում այդ անտանելի մտատանջութիւնից, որ միակ սփոփանքն է ինձ համար:

Բայց այժմ ես ոյժ չունիմ: Ես այլևս չեմ կարող տանել այդ մշտական մտրակումը...

Շատ կարելի է, ես աւելի խոր վէրք հասցնէի իմ ծնողներին սրտին, եթէ քաջ գայի Գէորգի հետ, որպէս կենդանի դիակ... Կամաց-կամաց տարրալուծուելով և նեխուելով... և այդ իմ ծաղիկ երիտասարդութեան տարիներում...

Միթէ ծնողներն իրանց զաւակի կեանքի վրայ իրաւունք ունին և այն դէպքում, երբ այդ կեանքը ներկայացնում է անբուժելի և աննուզելի չարիք...

Միթէ մեղք կը լինի, եթէ ես... բայց ես այլևս ոյժ չունիմ բարի լինելու:

Դա սոսկալի է...

Դեկտեմբերի 14-ին:

Ես ամեն բանի հետ հաշլւս վերջացրել եմ—իմ ցանկութիւնների, իմ յոյսերի, իմ հպարտութեան... Ամեն բանի հետ...

Իմ մէջ չկայ ոչինչ, բացի անսահման, մեռելային դատարկութիւնից...

Խենթութիւն կը լինէր հաւատալ երազած երջանկութեանը... ճահիճի վրայ հիմնել կեանքի շէնքը...

Ես քաջարի և անտարբեր կերպով իմ դիմաւորում մահուան: Ոչ մի բան ինձ չի վախեցնում: Ես այրեցի իմ յետևից բոլոր կամուրջները: Այլևս վերադառնալ անկարող եմ:

Ես դէն շարտեցի խղճուկ և վախկոտ անվճռականութիւնը, որ իմ շրջանի օրիորդների մթնոլորտն է կազմում: Ես չեմ կարող իմ անհատականութիւնը կամաց-կամաց ոչնչացնել:

Ես հետևում եմ այն ոյժին, որ ամենալաւ համոզուածներին էլ ամուր է:

Ես նման եմ մի քարի, որ նետուած է ներքև: Յոյսերից ու ցնորքներից դուրկ կեանքի ծանրութիւնն ինձ քաշում է:

Ես չեմ կարող խաբել այն մարդուն, որին այս աշխարհում ես ամենից շատ եմ սիրում:

Ես չեմ կարող նրա գիրկն ընկնել, առանց Ֆիզիկական զգուանքի: Չեմ կարող նրա կողքին ապրել... առանց յիշելու նրա անջնջելի ու ստոր անցեալը...

Բայց ես նրան առաջուանից պակաս չեմ սիրում...

Եւ որովհետև ես չեմ կարող նրա հետ ապրել... և չեմ կարող առանց նրան ապրել... դրա համար... ես ընտրում եմ միակ ճանապարհը...

Մի մեծ և սփոփիչ հանգստութիւն է տիրում իմ հոգուն այն ժամանակուանից, երբ ես զգացի այդ: Նոյն իսկ իմ սեփական մեղքի զգացմունքը անհետացել է վերջին օրերի մաքառումների մէջ:

Այն մարդիկ, որոնք կոպիտ միօրինակութեամբ ծիծաղում էին իմ գաղափարների վրայ, որպէս անիրագործելի չափազանցութիւնների վրայ, այն տղամարդիկ, որոնք ծաղրում էին ինձ (սրտի խորքում զգալով իրանց մեղքը)... կը դադարեն մի ընդէ ծիծաղելուց, երբ կ'իմանան այս...

Եւ գուցէ մաքուր և նուրբ զգացմունքով կանայք, կարողով իմ ճակատագրի մասին... կը սկսեն ինձ նման մտածել... գուցէ կ'ապրեն իմ կեանքով և կը տանջուեն իմ տանջանքով...

Եւ եթէ ինձ յաջողուի գէթ մի փոքրիկ քար դնել մաքուր, ողջախոհ ապագայի հրաշալի շէնքի համար... այդ գէպքում արժէ իմ կեանքը գոհել:

Գերման. Թարգմ. տիկին Հրանոյշ.

ԹՈՒՐԹՕ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԽՆՔԻ ՔՄՆԵՒՀԻՆԳԱ-  
ՄԵԱԿԸ

1880—1905

Վ

Միև առաւօտ մեր քարավանը արդէն կազմու պատրաստ ճանապարհ ընկաւ դէպի Վան: Մեր բուրդ մահմանդարը ջուկատ մի ձիաւորներով մեզ ուղեկից եղաւ մինչև Մար-Իշոյի հինաւուրց վանքը՝ Շամզդինանից 7—8 ժամ հեռաւորութեամբ, ուր իր աթոռն ունի Ասորոց Մաթրոնը, Մարշիմոնի փոխանորդը, որ թէև աստիճանով կաթուղիկոսից վար է, բայց եկեղեցական պաշտօնով նրանից բարձր է իր նշանակութիւնը, քանզի նա է օծում կաթուղիկոսին հանդիսաւոր ծիսակատարութեամբ և ասորոց թէ քրդաց մօտ մեծ հեղինակութիւն է վայելում: